ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Վերջին դասի կապակցությամբ

Սիրելի շրջանավարտնե՛ր,

Շնորհավորում եմ դպրոցական Վերջին դասի կապակցությամբ:

Դուք ավարտեցիք ձեր կյանքի կարևորագույն փուլերից մեկը՝ ավարտեցիք դպրոցը և մուտք եք գործում դեպի մեծ կյանք:

Վստահ եմ, որ դպրոցական տարիներին ստացած գիտելիքներով դուք լավագույնս կդրսևորեք ձեր ունակություններն ու կարողությունները և մասնագիտական ճիշտ կողմնորոշմամբ կնպաստեք երկրի տնտեսության ամենատարբեր ոլորտների առաջընթացին, պետականության հիմքերի ամրապնդմանն ու հզորացմանը: Ձեր ազատ, անկաշկանդ մտածողությամբ մեր նորօրյա պատմությունը կհարստացնեք հերոսական դրվագներով, լիովին կարդարացնեք ձեր ծնողների և ուսուցիչների ակնկալիքները:

Ողջունում եմ բոլոր ուսուցիչներին և շրջանավարտների ծնողներին: Մեծ է ձեր ներդրումն այսօրվա շրջանավարտների՝ վաղվա մեր հասարակության դիմագծի և որակի կայացման գործում: Դուք այսօր կյանք եք ճանապարհում հասուն և կազմակերպված մի նոր սերունդ, որն իր աշխատանքով ու ներդրումով դառնալու է մեր երկրի հզորացման ու ամրապնդման գործի հուսալի և ակտիվ մասնակիցը:

Սիրելի շրջանավարտնե՛ր, շնորհավորելով ձեզ այս գեղեցիկ և անմոռանալի օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ հետագա հաջողություններ, երջանկություն, ձեր բոլոր նվիրական իղձերի իրականացում: